Բնրանք յայտնեցին մի քանի անուններ, իսկ Մարիամը աւելացրուց.

— Գիտե՞ս, Ֆարհատ, Սօնան էլ եկել է մեզ հետ. նրա հայրն էլ, եղբայրն էլ եկել են: Հիմա ի՞նչ կ'ասի, երբ որ տէրտէրը քեզ կտեսնէ:

— Ինչ պէտք է ասի, — պատասխանեց Մագթաղը ծիծաղելով: — Կբռնէ ականջներիցը ձիգ կը տայ ու կասէ՝ Ֆարհատ, ինչո՞ւ փախար վարժարանից:

— Նա չէ կարող, հիմա ես նրա ականջներից ձիգ կը տամ, — պատասխանեցի ես:

— Վա՛յ, մեղք չէ՞, ախար նա տէրտէր է :

— Ֆարհատը հանաք է անում, — խօսեց Մարիամը:

— Սօնան գիտէ՞, որ այստեղ եմ, — հարցրի ես:

— Նա չէ իմանում, նա այսօր առաւօտեան ինձ ասում էր՝ «էրնե՛կ Ֆարհատն այստեղ լիներ» — Նա շատ ուզում էր քեզ տեսնել: Ինչո՞ւ էր ուզում, Ֆարհատ, — հարցրուց Մարիամը:

— Չեմ իմանում... Բայց որտե՞ղ են վեր եկել նրանք:

- Չտեսա՞ր դու, նրանց չադրը կպած էր մերին: Նրանք էլ քեզ չտեսան, չեմ իմանում, ուր էին գնացել, այնտեղ չէին, — ասաց Մարիամը:

Քոյրերս պատմեցին մեր քաղաքից մի քանի նորութիւններ, որոնց թւում յայտնեցին եւ վարժապետիս կնոջ՝ ողորմելի Գիւլ-ջհանի մահը: Ես մի կողմից ուրախացայ, որ խեղճ կինը ազատուեցաւ իր տանջանքներից, որով չարչարւում էր նա այնքան շատ տարիներ, խիստ հազիւ բաժանելով հիւանդութեան մահճից: Բայց ինձ վրայ խիստ տխուր տպաւորութիւն գործեց, երբ Մագթաղը ասաց, թէ մեր քաղաքում այնպէս լուր էր տարածել, իբր թէ տէրտէրակնոջ մահուան պատճառն եղել է տէր հօր սաստիկ ծեծը, որին արժանացրել էր քահանան իր կնոջը նրա մահուանջց մի քանի օր առաջ: Ես առանց երկբայութեան հաւատացի, մտաբերելով, թէ որպէ՞ս բարբարոսաբար ծեծում էր նա ինձ եւ իմ ընկերներին: Եւ մի այսպիսի մարդը, որպէս վարժապետ եւ քահանայ, առաջնորդում էր մի ամբողջ քաղաքի ուխտաւորներին դէպի աստուծոյ մօր տաճարի երկրպագութիւնը...

Որպէս իմացայ քոյրերիցս, տէր Թոդիկը, բացի Սօնայից, բերել էր իր հետ եւ իր որդի Ստեփանին: Խեղճ տղայի խեչացնորութիւնը, վերջին օրերում աւելի սաստկացած լինելով, հայրը բերել էր նրան սուրբ աստուածածնի վանքը այն մտքով, որ թողնէ Ստեփանին մնալու վանքի «խեղճերի» մէջ, այնտեղ բժշկուելու համար: Նա այժմ համարում էր Ստեփանի խելացնորու-